# ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԵՔ-ԲՄԱԾՁԲ-24/39

ք. Երևան «21» «05» 2024 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Վ.Պապիկյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ա.Ա.Բ. ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա.Բադալյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Երևան քաղաքի Նոր Նորք և Նորք-Մարաշ վարչական շրջանների փողոցների միջին նորոգման** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ Համաձայն հավելված 2:

**2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ**

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

**3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

**3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

**3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

**3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքները ամբողջությամբ կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային

ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 495000000 (չորս հարյուր իննսունհինգ միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական

միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

**5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝**

**ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված գինն է (եթե ներառված են մեկից ավել չափաբաժիններ, ապա տվյալ չափաբաժնի գինն է).**

**ՆԳ-ն իրավերով հրապարակված շինարարական աշխատանքների նախահաշվային գինն է.**

**ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.**

**ՎԳ –ն ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:**

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները.

| N | Խախտումը | Պատասխանատվությունը |
|---|---|---|
| 1 | Շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը չկատարել | Տուգանք – պայմանագրային գնի 0.5% չափով |
| 2 | Տեխնիկական անվտանգության նորմերի չպահպանելը | Տուգանք – պայմանագրային գնի 0.5% չափով |
| 3 | Սանիտարահիգենիկ և բնապահպանական նորմերի չպահպանելը | Տուգանք – պայմանագրային գնի 0.5% չափով |
| 4 | Շինարարների համազգեստի վրա՝ շինարարություն իրականացնող կազմակերպության տարբերանշանի բացակայություն | Տուգանք – պայմանագրային գնի 0.5% չափով |

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ

կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կապալառուն պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք

բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 21 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրով նախատեսնված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում է **Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչությունը:**

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված աշխատանքի կատարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| Երևանի քաղաքապետարան | «Ա.Ա.Բ. ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ |
| ք. Երևան, Արգիշտիի փ. 1 | ք. Երևան, Գևորգ Վարդանյան 1Ա |
| ՀՎՀՀ 02593108 | Արդշինբանկ ՓԲԸ |
| | Հ/Հ 2470100091880010 |
| | ՀՎՀՀ 00250339 |
| Վ.Պապիկյան ____________ (ստորագրություն) Կ.S | Ա.Բադալյան ____________ (ստորագրություն) Կ.S. |

Հավելված թիվ 1
«21» « 05 » 2024 թ. կնքված
ԵՔ-ԲՄԱՇՁԲ-24/39 ծածկագրով պայմանագրի

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Երևան քաղաքի Նոր Նորք և Նորք-Մարաշ վարչական շրջանների փողոցների միջին նորոգման աշխատանքների

| ՀՀ NN | Աշխատանքների անվանումը<br>Наименование работ | Չափման միավորը<br>Единица измерения | Ծավալ | Միավորի արժեքը /հազ. դրամ/Стоимость единицы/тыс.драм/ | Ընդամենը/հազ.դրամ/<br>Итого/(тысяча драм) | Կշիռը<br>Процентное соотношение % |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1 | Բաղյան փողոց /Գայի պողոտայի խաչմերուկից Գյուրջյան փողոցի խաչմերուկ/ ՊԿ0+00 -:-ՊԿ5+00 | | | | | |
| I | Քանդման աշխատանքներ<br>Разборочные работы | | | | | |
| 1 | Գոյություն ունեցող ճանապարհային ծածկի ֆրեզում հմիջ=5սմ և հանձնում սեփականատիրոջը /Фрезерование существующего дорожного покрытия hср=5см , возврат собственику | մ2<br>м2 | 4200 | 0.71 | 2998.01 | |
| | 1. Ընդամենը/հազ. դրամ/<br>1.Итого /тыс. драм/ | | | | 2998.01 | 0.442 |
| II | Ծածկի կոնստրուկցիան<br>Конструкция покрытии | | | | | |
| 1 | Փոսային նորոգում h=3-:5սմ<br>Ямочный ремонт h=3-:5см | մ2<br>м2 | 126 | 4.84 | 610.41 | |
| 2 | Շին աղբի բարձում, տեղափոխում լցակույտ 13.0կմ<br>Погрузка строительного мусора, перевозка в отвал 13 км | տոն<br>тон | 11.1 | 1.41 | 15.68 | |
| 2 | Հարթեցնող շերտ մանրահատիկ ա/բետոնով հմիջ=3սմ<br>Выравнивающий слой мелк. а/бетоном hср.=3 см | տոն<br>тон | 59.22 | 43.00 | 2546.71 | |
| 3 | Մակերևույթային մշակում բիտումով 0,6լ/մ2<br>обработка поверхности битумом 0.6л/1м2 | մ2<br>м2 | 4200 | 0.17 | 723.13 | |
| 4 | Ա/բ ծածկի իրականացում մանրահատիկ ա/բետոնից h=5սմ/Устройство мелкозернистого а/бетонного покрытия h=5см | մ2<br>м2 | 4200 | 5.12 | 21514.40 | |
| | 2. Ընդամենը/հազ. դրամ/<br>2.Итого /тыс. драм/ | | | | 25410.34 | 3.746 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| III | Դիտահորեր և անձրևնդունիչներ<br>Колодцы и дождеприемники | | | | | |
| 1 | Դիտահորի սալերի ապատեղակայում, տեղակայում<br>Демонтаж, монтаж плит колодцев | հատ<br>шт | 20 | 3.12 | 62.31 | |
| 2 | Դիտահորերի միաձույլ բետոնե պատերի իրականացում B20 բարձրացում/ Наращивание стен колодцев B20 | մ3<br>м3 | 2.4 | 68.17 | 163.61 | |
| 3 | Անձրևընդունիչների ցանցերի ապատեղակայում, տեղակայում/Демонтаж, монтаж решеток дождеприемников | հատ<br>шт | 3 | 5.24 | 15.72 | |
| 4 | Անձրևահորերի միաձույլ բետոնե պատերի պատրաստում B-20 դասի բետոնից (բարձրացում)/Наращивание стен дождеприемников B20 | մ3<br>м3 | 0.48 | 68.17 | 32.72 | |
| | 3. Ընդամենը/հազ. դրամ/<br>3.Итого /тыс. драм/ | | | | 274.36 | 0.040 |
| | Բաղյան փողոց /Գայի պողոտայի խաչմերուկից Գյուրջյան փողոցի խաչմերուկ/ ՊԿ0+00 -:-ՊԿ5+00հազ.դրամ/<br>Всего ул. Багяна / от проспекта Гая до перекрестка на ул. Гюрджян/ ПК0+00 -:-ПК5+00/тыс.драм/ | | | | 28682.71 | 4.228 |
| 2 | Գալշոյան փողոց /Միկոյան փողոցի խաչմերուկից Միկոյան փողոց՝եկեղեցի/ ՊԿ0+00 -:-ՊԿ10+00 | | | | | |
| I | Քանդման աշխատանքներ<br>Разборочные работы | | | | | |
| 1 | Գոյություն ունեցող ճանապարհային ծածկի ֆրեզում հմիջ=5սմ և հանձնում սեփականատիրոջը /Фрезерование существующего дорожного покрытия hcp=5см , возврат собственику | մ2<br>м2 | 12060 | 0.71 | 8608.57 | |
| | 1. Ընդամենը/հազ. դրամ/<br>1.Итого /тыс. драм/ | | | | 8608.57 | 1.269 |
| II | Ծածկի կոնստրուկցիան<br>Конструкция покрытии | | | | | |
| 1 | Փոսային նորոգում h=3-:5սմ<br>Ямочный ремонт h=3-:5см | մ2<br>м2 | 361.8 | 4.84 | 1752.76 | |
| 2 | Շին աղբի բարձում, տեղափոխում լցակույտ 13.0կմ<br>Погрузка строительного мусора, перевозка в отвал 13 км | տոն<br>тон | 31.8 | 1.41 | 45.03 | |
| 3 | Հարթեցնող շերտ մանրահատիկ ա/բետոնով հմիջ=3սմ<br>Выравнивающий слой мелк. а/бетоном hcp.=3 см | տոն<br>тон | 170.05 | 43.00 | 7312.70 | |
| 4 | Մակերևույթային մշակում բիտումով 0,6լ/մ2<br>обработка поверхности битумом 0.6л/1м2 | մ2<br>м2 | 12060 | 0.17 | 2076.42 | |
| 5 | Ա/բ ծածկի իրականացում մանրահատիկ ա/բետոնից h=5սմ/Устройство мелкозернистого а/бетонного покрытия h=5см | մ2<br>м2 | 12060 | 5.12 | 61777.06 | |
| | 2. Ընդամենը/հազ. դրամ/<br>2.Итого /тыс. драм/ | | | | 72963.97 | 10.756 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| III | Դիտահորեր և անձրևնդունիչներ<br>Колодцы и дождеприемники | | | | | |
| 1 | Դիտահորի սալերի ապատեղակայում, տեղակայում<br>Демонтаж, монтаж плит колодцев | հատ<br>шт | 10 | 3.12 | 31.16 | |
| 2 | Դիտահորերի միաձույլ բետոնե պատերի իրականացում B20 բարձրացում/ Наращивание стен колодцев B20 | մ3<br>м3 | 1.2 | 68.17 | 81.80 | |
| 3 | Անձրևընդունիչների ցանցերի ապատեղակայում, տեղակայում/Демонтаж, монтаж решеток дождеприемников | հատ<br>шт | 3 | 5.24 | 15.72 | |
| 4 | Անձրևահորերի միաձույլ բետոնե պատերի պատրաստում B-20 դասի բետոնից (բարձրացում)/Наращивание стен дождеприемников B20 | մ3<br>м3 | 0.48 | 68.17 | 32.72 | |
| | 3. Ընդամենը/հազ. դրամ/<br>3.Итого /тыс. драм/ | | | | 161.40 | 0.024 |
| | Ընդհանուրը Գալշոյան փողոց /Միկոյան փողոցի խաչմերուկից Միկոյան փողոց՝եկեղեցի/ ՊԿ0+00 -:-ՊԿ10+00/հազ.դրամ/<br>Всего ул. Галшояна / от перекрестка на ул. Микоян до ул. Микоян. церковь/ ПК0+00 -:-ПК10+00/тыс.драм/ | | | | 81733.94 | 12.049 |
| 3 | Հունան Ավետիսյան փողոց /Վիլնյուսի փողոցի խաչմերուկից Դավիթ Բեկ փողոցի խաչմերուկ/ ՊԿ0+00 -:-ՊԿ10+00 | | | | | |
| I | Քանդման աշխատանքներ<br>Разборочные работы | | | | | |
| 1 | Գոյություն ունեցող ճանապարհային ծածկի ֆրեզում հմիջ=5սմ և հանձնում սեփականատիրոջը /Фрезерование существующего дорожного покрытия hср=5см , возврат собственику | մ2<br>м2 | 9900 | 0.71 | 7066.73 | |
| | 1. Ընդամենը/հազ. դրամ/<br>1.Итого /тыс. драм/ | | | | 7066.73 | 1.042 |
| II | Ծածկի կոնստրուկցիան<br>Конструкция покрытии | | | | | |
| 1 | Փոսային նորոգում h=3-:5սմ<br>Ямочный ремонт h=3-:5см | մ2<br>м2 | 297 | 4.84 | 1438.83 | |
| 2 | Շին աղբի բարձում, տեղափոխում լցակույտ 13.0կմ<br>Погрузка строительного мусора, перевозка в отвал 13 км | տոն<br>тон | 26.1 | 1.41 | 36.97 | |
| 3 | Հարթեցնող շերտ մանրահատիկ ա/բետոնով հմիջ=3սմ<br>Выравнивающий слой мелк. а/бетоном hср.=3 см | տոն<br>тон | 139.59 | 43.00 | 6002.97 | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 4 | Մակերևույթային մշակում բիտումով 0,6լ/մ2<br>обработка поверхности битумом 0.6л/1м2 | մ2<br>м2 | 9900 | 0.17 | 1704.52 | |
| 5 | Ա/բ ծածկի իրականացում մանրահատիկ ա/բետոնից h=5սմ/Устройство мелкозернистого а/бетонного покрытия h=5см | մ2<br>м2 | 9900 | 5.12 | 50712.51 | |
| | 2. Ընդամենը/հազ. դրամ/<br>2.Итого /тыс. драм/ | | | | 59895.80 | 8.829 |
| III | Դիտահորեր և անձրևնդունիչներ<br>Колодцы и дождеприемники | | | | | |
| 1 | Դիտահորի սալերի ապատեղակայում, տեղակայում<br>Демонтаж, монтаж плит колодцев | հատ<br>шт | 18 | 3.12 | 56.08 | |
| 2 | Դիտահորերի միաձույլ բետոնե պատերի իրականացում B20 բարձրացում/ Наращивание стен колодцев B20 | մ3<br>м3 | 2.16 | 68.17 | 147.25 | |
| 3 | Անձրևընդունիչների ցանցերի ապատեղակայում, տեղակայում/Демонтаж, монтаж решеток дождеприемников | հատ<br>шт | 6 | 5.24 | 31.44 | |
| 4 | Անձրևահորերի միաձույլ բետոնե պատերի պատրաստում B-20 դասի բետոնից (բարձրացում)/Наращивание стен дождеприемников B20 | մ3<br>м3 | 0.96 | 68.17 | 65.44 | |
| | 3. Ընդամենը/հազ. դրամ/<br>3.Итого /тыс. драм/ | | | | 300.21 | 0.044 |
| | Ընդամենը Հունան Ավետիսյան փողոց /Վիլնյուսի փողոցի խաչմերուկից Դավիթ Բեկ փողոցի խաչմերուկ/ ՊԿ0+00 -:-ՊԿ10+00/հազ.դրամ/<br>Всего ул. У. Аветисяна / от перекрестка на ул. Вильнюс до перекрестки на ул. Давида Бек/ ПК0+00 -:-ПК10+00//тыс.драм/ | | | | 67262.75 | 9.915 |
| 4 | Վիլնյուսի փողոց /40 համարի երթուղու վերջնակետ մինչև Հ. Ավետիսյան Վիլնյուսի խաչմերուկ ՊԿ0+00 -:-ՊԿ11+50 | | | | | |
| 1 | Քանդման աշխատանքներ<br>Разборочные работы | | | | | |
| 1 | Գոյություն ունեցող ճանապարհային ծածկի ֆրեզում hմիջ=5սմ և հանձնում սեփականատիրոջը /Фрезерование существующего дорожного покрытия hср=5см , возврат собственику | մ2<br>м2 | 13890 | 0.71 | 9914.84 | |
| | 1. Ընդամենը/հազ. դրամ/<br>1.Итого /тыс. драм/ | | | | 9914.84 | 1.462 |
| II | Ծածկի կոնստրուկցիան<br>Конструкция покрытии | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Փոսային նորոգում h=3-:5սմ<br>Ямочный ремонт h=3-:5см | մ2<br>м2 | 416.7 | 4.84 | 2018.72 | |
| 2 | Շին աղբի բարձում, տեղափոխում լցակույտ 13.0կմ<br>Погрузка строительного мусора, перевозка в отвал 13 км | տոն<br>тон | 36.7 | 1.41 | 51.87 | |
| 3 | Հարթեցնող շերտ մանրահատիկ ա/բետոնով հմիջ=3սմ<br>Выравнивающий слой мелк. а/бетоном hср.=3 см | տոն<br>тон | 195.85 | 43.00 | 8422.34 | |
| 4 | Մակերևույթային մշակում բիտումով 0,6լ/մ2<br>обработка поверхности битумом 0.6л/1м2 | մ2<br>м2 | 13890 | 0.17 | 2391.50 | |
| 5 | Ա/բ ծածկի իրականացում մանրահատիկ ա/բետոնից h=5սմ/Устройство мелкозернистого а/бетонного покрытия h=5см | մ2<br>м2 | 13890 | 5.12 | 71151.19 | |
| | 2. Ընդամենը/հազ. դրամ/<br>2.Итого /тыс. драм/ | | | | 84035.62 | 12.388 |
| III | Դիտահորեր<br>Колодцы | | | | | |
| 1 | Դիտահորի սալերի ապատեղակայում, տեղակայում<br>Демонтаж, монтаж плит колодцев | հատ<br>шт | 16 | 3.12 | 49.85 | |
| 2 | Դիտահորերի միաձույլ բետոնե պատերի իրականացում B20 բարձրացում/ Наращивание стен колодцев B20 | մ3<br>м3 | 1.92 | 68.17 | 130.89 | |
| | 3. Ընդամենը/հազ. դրամ/<br>3.Итого /тыс. драм/ | | | | 180.74 | 0.027 |
| | Ընդամենը Վիլնյուսի փողոց /40 համարի երթուղու վերջնակետ մինչև Հ. Ավետիսյան Վիլնյուսի խաչմերուկ ՊԿ0+00 -:-ՊԿ11+50/հազ.դրամ/<br>Всего улица Вильнюса / конечная точка маршрута № 40 до У. Аветисяна, перекресток Вильнюса, ПК0+00 -:-КП11+50/тыс.драм/ | | | | 94131.20 | 13.876 |
| 5 | Ն.Ստեփանյան փողոց /Գայի պողոտայից մինչև Մոլդովական փողոց/ՊԿ0+00 -:-ՊԿ6+80 | | | | | |
| I | Քանդման աշխատանքներ<br>Разборочные работы | | | | | |
| 1 | Գոյություն ունեցող ճանապարհային ծածկի ֆրեզում հմիջ=5սմ և հանձնում սեփականատիրոջը /Фрезерование существующего дорожного покрытия hср=5см , возврат собственику | մ2<br>м2 | 7000 | 0.71 | 4996.68 | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 1. Ընդամենը/հազ. դրամ/<br>1.Итого /тыс. драм/ | | | | 4996.68 | 0.737 |
| II | Ծածկի կոնստրուկցիան<br>Конструкция покрытии | | | | | |
| 1 | Փոսային նորոգում h=3-:5սմ<br>Ямочный ремонт h=3-:5см | մ2<br>м2 | 210 | 4.84 | 1017.35 | |
| 2 | Շին աղբի բարձում, տեղափոխում լցակույտ 13.0կմ<br>Погрузка строительного мусора, перевозка в отвал 13 км | տոն<br>тон | 18.5 | 1.41 | 26.14 | |
| 2 | Հարթեցնող շերտ մանրահատիկ ա/բետոնով hմիջ=3սմ<br>Выравнивающий слой мелк. а/бетоном hср.=3 см | տոն<br>тон | 98.7 | 43.00 | 4244.52 | |
| 3 | Մակերևույթային մշակում բիտումով 0,6լ/մ2<br>обработка поверхности битумом 0.6л/1м2 | մ2<br>м2 | 7000 | 0.17 | 1205.22 | |
| 4 | Ա/բ ծածկի իրականացում մանրահատիկ ա/բետոնից h=5սմ/Устройство мелкозернистого а/бетонного покрытия h=5см | մ2<br>м2 | 7000 | 5.12 | 35857.33 | |
| | 2. Ընդամենը/հազ. դրամ/<br>2.Итого /тыс. драм/ | | | | 42350.56 | 6.243 |
| III | Դիտահորեր<br>Колодцы | | | | | |
| 1 | Դիտահորի սալերի ապատեղակայում, տեղակայում<br>Демонтаж, монтаж плит колодцев | հատ<br>шт | 32 | 3.12 | 99.70 | |
| 2 | Դիտահորերի միաձույլ բետոնե պատերի իրականացում B20 բարձրացում/ Наращивание стен колодцев B20 | մ3<br>м3 | 3.84 | 68.17 | 261.77 | |
| | 3. Ընդամենը/հազ. դրամ/<br>3.Итого /тыс. драм/ | | | | 361.48 | 0.053 |
| | Ընդամենը Ն.Ստեփանյան փողոց /Գայի պողոտայից մինչև Մոլդովական փողոց/ՊԿ0+00 -:- ՊԿ6+80/հազ.դրամ/<br>Всего ул. Н. Степаняна / от пр. Гая до ул. Молдовакан / ПК0+00 -:-ПК6+80/тыс.драм/ | | | | 47708.72 | 7.033 |
| 6 | Ա. Արմենակյան փողոց /Արմենակյան փողոց Հերացի փողոց հատումից մինչև Հովսեփյան փողոց խաչմերուկ/ ՊԿ0+00-ՊԿ22+56/Улица А. Арменакяна / от перекрестка улиц А. Арменакяна - Гераци до перекрестка с улицей Овсепян/ ПК0+00-ПК22+56/ | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| I | Քանդման աշխատանքներ<br>Разборочные работы | | | | | |
| 1 | Գոյություն ունեցող ճանապարհային ծածկի ֆրեզում հմիջ=5սմ և հանձնում սեփականատիրոջը /Фрезерование существующего дорожного покрытия hср=5см , возврат собственику | մ2<br>м2 | 23759 | 0.71 | 16959.45 | |
| | 1. Ընդամենը/հազ. դրամ/<br>1.Итого /тыс. драм/ | | | | 16959.45 | 2.500 |
| II | Ծածկի կոնստրուկցիան<br>Конструкция покрытии | | | | | |
| 1 | Փոսային նորոգում h=3-:5սմ<br>Ямочный ремонт h=3-:5см | մ2<br>м2 | 712.77 | 4.81 | 3430.35 | |
| 2 | Շին աղբի բարձում, տեղափոխում լցակույտ 13.0կմ<br>Погрузка строительного мусора, перевозка в отвал 13 км | տոն<br>тон | 62.7 | 1.40 | 87.79 | |
| 3 | Հարթեցնող շերտ մանրահատիկ ա/բետոնով հմիջ=3սմ<br>Выравнивающий слой мелк. а/бетоном hср.=3 см | տոն<br>тон | 335 | 42.84 | 14351.85 | |
| 4 | Մակերևույթային մշակում բիտումով 0,6լ/մ2<br>обработка поверхности битумом 0.6л/1м2 | մ2<br>м2 | 23759 | 0.17 | 4081.02 | |
| 5 | Ա/բ ծածկի իրականացում մանրահատիկ ա/բետոնից h=5սմ/Устройство мелкозернистого а/бетонного покрытия h=5см | մ2<br>м2 | 23759 | 5.11 | 121334.33 | |
| | 2. Ընդամենը/հազ. դրամ/<br>2.Итого /тыс. драм/ | | | | 143285.34 | 21.122 |
| III | Դիտահորեր և անձրևնդունիչներ<br>Колодцы и дождеприемники | | | | | |
| 1 | Դիտահորի սալերի ապատեղակայում, տեղակայում<br>Демонтаж, монтаж плит колодцев | հատ<br>шт | 82 | 3.03 | 248.21 | |
| 2 | Դիտահորերի միաձույլ բետոնե պատերի իրականացում B20 բարձրացում/ Наращивание стен колодцев B20 | մ3<br>м3 | 9.84 | 67.75 | 666.61 | |
| | 3. Ընդամենը/հազ. դրամ/<br>3.Итого /тыс. драм/ | | | | 914.83 | 0.135 |
| | Ընդամենը Ա. Արմենակյան փողոց /Արմենակյան փողոց Հերացի փողոց հատումից մինչև Հովսեփյան փողոց խաչմերուկ/ ՊԿ0+00-ՊԿ22+56/Улица А. Арменакяна / от перекрестка улиц А. Арменакяна - Гераци до перекрестка с улицей Овсепян/ ПК0+00-ПК22+56/ | | | | 161159.61 | 23.757 |
| 7 | **Է. Իսաբեկյանի փողոց /Գ. Հովսեփյան փ. Իսաբեկյան փ. խաչմերուկից մինչև Իսաբեկյանի. Սաֆարյան փ. խաչմերուկ / ՊԿ0+00-ՊԿ6+52/Улица Э. Исабекяна / от перекрестка улиц Г. Овсепян - Исабекян до перекрестка с улиц Исабекян- Сафарян/ ПК0+00-ПК6+52/** | | | | | |
| I | Քանդման աշխատանքներ<br>Разборочные работы | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Գոյություն ունեցող ճանապարհային ծածկի ֆրեզում հմիջ=5սմ և հանձնում սեփականատիրոջը /Фрезерование существующего дорожного покрытия hср=5см , возврат собственику | մ2 м2 | 5330 | 0.71 | 3804.62 | |
| | 1. Ընդամենը/հազ. դրամ/ 1.Итого /тыс. драм/ | | | | 3804.62 | 0.561 |
| II | Ծածկի կոնստրուկցիան Конструкция покрытии | | | | | |
| 1 | Փոսային նորոգում h=3-:5սմ Ямочный ремонт h=3-:5см | մ2 м2 | 159.9 | 4.81 | 769.55 | |
| 2 | Շին աղբի բարձում, տեղափոխում լցակույտ 13.0կմ Погрузка строительного мусора, перевозка в отвал 13 км | տոն тон | 14.1 | 1.40 | 19.69 | |
| 3 | Հարթեցնող շերտ մանրահատիկ ա/բետոնով հմիջ=3սմ Выравнивающий слой мелк. а/бетоном hср.=3 см | տոն тон | 75.153 | 42.84 | 3219.64 | |
| 4 | Մակերևույթային մշակում բիտումով 0,6լ/մ2 обработка поверхности битумом 0.6л/1м2 | մ2 м2 | 5330 | 0.17 | 915.52 | |
| 5 | Ա/բ ծածկի իրականացում մանրահատիկ ա/բետոնից h=5սմ/Устройство мелкозернистого а/бетонного покрытия h=5см | մ2 м2 | 5330 | 5.11 | 27219.66 | |
| | 2. Ընդամենը/հազ. դրամ/ 2.Итого /тыс. драм/ | | | | 32144.07 | 4.738 |
| III | Դիտահորեր Колодцы | | | | | |
| 1 | Դիտահորի սալերի ապատեղակայում, տեղակայում Демонтаж, монтаж плит колодцев | հատ шт | 20 | 3.03 | 60.54 | |
| 2 | Դիտահորերի միաձույլ բետոնե պատերի իրականացում B20 բարձրացում/ Наращивание стен колодцев B20 | մ3 м3 | 2.4 | 67.75 | 162.59 | |
| | 3. Ընդամենը/հազ. դրամ/ 3.Итого /тыс. драм/ | | | | 223.13 | 0.033 |
| | Ընդամենը Է. Իսաբեկյանի փողոց /Գ. Հովսեփյան փ. Իսաբեկյան փ. խաչմերուկից մինչև Իսաբեկյանփ. Սաֆարյան փ. խաչմերուկ / ՊԿ0+00-ՊԿ6+52/Улица Э. Исабекяна / от перекреста улиц Г. Овсепян - Исабекян до перекреста с улиц Исабекян- Сафарян/ ПК0+00-ПК6+52/ | | | | 36171.81 | 5.332 |
| 8 | Ծործվենցի փողոց 2-րդ կտոր/Ծործվենցի փողոցից մինչև Ստեփանյան փողոց/ՊԿ0+00 -:-ՊԿ3+50 | | | | | |
| I | Քանդման աշխատանքներ Разборочные работы | | | | | |
| 1 | Գոյություն ունեցող ճանապարհային ծածկի ֆրեզում հմիջ=5սմ և հանձնում սեփականատիրոջը /Фрезерование существующего дорожного покрытия hср=5см , возврат собственику | մ2 м2 | 3255 | 0.71 | 2323.46 | |
| | 1. Ընդամենը/հազ. դրամ/ 1.Итого /тыс. драм/ | | | | 2323.46 | 0.343 |
| II | Ծածկի կոնստրուկցիան Конструкция покрытии | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Փոսային նորոգում h=3-:5սմ<br>Ямочный ремонт h=3-:5см | մ2<br>м2 | 97.65 | 4.84 | 473.07 | |
| 2 | Շին աղբի բարձում, տեղափոխում լցակույտ 13.0կմ<br>Погрузка строительного мусора, перевозка в отвал 13 км | տոն<br>тон | 8.6 | 1.41 | 12.15 | |
| 3 | Հարթեցնող շերտ մանրահատիկ ա/բետոնով hմիջ=3սմ<br>Выравнивающий слой мелк. а/бетоном hср.=3 см | տոն<br>тон | 45.90 | 43.00 | 1973.70 | |
| 4 | Մակերևույթային մշակում բիտումով 0,6լ/մ2<br>обработка поверхности битумом 0.6л/1м2 | մ2<br>м2 | 3255 | 0.17 | 560.43 | |
| 5 | Ա/բ ծածկի իրականացում մանրահատիկ ա/բետոնից h=5սմ/Устройство мелкозернистого а/бетонного покрытия h=5см | մ2<br>м2 | 3255 | 5.12 | 16673.66 | |
| | 2. Ընդամենը/հազ. դրամ/<br>2.Итого /тыс. драм/ | | | | 19693.01 | 2.903 |
| III | Դիտահորեր<br>Колодцы | | | | | |
| 1 | Դիտահորի սալերի ապատեղակայում, տեղակայում<br>Демонтаж, монтаж плит колодцев | հատ<br>шт | 20 | 3.12 | 62.31 | |
| 2 | Դիտահորերի միաձույլ բետոնե պատերի իրականացում B20 բարձրացում/ Наращивание стен колодцев B20 | մ3<br>м3 | 2.4 | 68.17 | 163.61 | |
| | 3. Ընդամենը/հազ. դրամ/<br>3.Итого /тыс. драм/ | | | | 225.92 | 0.033 |
| | Ընդամենը Թոթովենցի փողոց 2-րդ կտոր /Թոթովենցի փողոցից մինչև Ստեփանյան փողոց/ՊԿ0+00 -:-ՊԿ3+50/հազ.դրամ/<br>Всего ул. Тотовенца /от ул. Тотовенца до ул. Степаняна/ПК0+00 -:- ПК3+50//тыс.драм/ | | | | 22242.39 | 3.279 |
| 9 | Ս. Բաղդասարյան փողոց /Ս. Բաղդասարյան փ. Ա. Հարությունյան փ. Խաչմերուկից Վնասվածքաբանական / ՊԿ0+00-ՊԿ14+66/Улица С. Багдасарян / от перекрестка улиц С. Багдасарян - А. Арутюняа до Научного Центра Травмоталогии и Ортопедии/ПК0+00-ПК14+66/ | | | | | |
| I | Քանդման աշխատանքներ<br>Разборочные работы | | | | | |
| 1 | Գոյություն ունեցող ճանապարհային ծածկի ֆրեզում hմիջ=5սմ և հանձնում սեփականատիրոջը /Фрезерование существующего дорожного покрытия hср=5см , возврат собственику | մ2<br>м2 | 15680 | 0.71 | 11192.56 | |
| | 1. Ընդամենը/հազ. դրամ/<br>1.Итого /тыс. драм/ | | | | 11192.56 | 1.650 |
| II | Ծածկի կոնստրուկցիան<br>Конструкция покрытии | | | | | |
| 1 | Փոսային նորոգում h=3-:5սմ<br>Ямочный ремонт h=3-:5см | մ2<br>м2 | 470.4 | 4.81 | 2263.90 | |
| 2 | Շին աղբի բարձում, տեղափոխում լցակույտ 13.0կմ<br>Погрузка строительного мусора, перевозка в отвал 13 км | տոն<br>тон | 41.4 | 1.40 | 57.94 | |
| 3 | Հարթեցնող շերտ մանրահատիկ ա/բետոնով hմիջ=3սմ<br>Выравнивающий слой мелк. а/бетоном hср.=3 см | տոն<br>тон | 221.09 | 42.84 | 9471.66 | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 4 | Մակերևույթային մշակում բիտումով 0,6լ/մ2<br>обработка поверхности битумом 0.6л/1м2 | մ2<br>м2 | 15680 | 0.17 | 2693.31 | |
| 5 | Ա/բ ծածկի իրականացում մանրահատիկ ա/բետոնից h=5սմ/Устройство мелкозернистого а/бетонного покрытия h=5см | մ2<br>м2 | 15680 | 5.11 | 80075.86 | |
| | 2. Ընդամենը/հազ. դրամ/<br>2.Итого /тыс. драм/ | | | | 94562.65 | 13.940 |
| III | Դիտահորեր<br>Колодцы | | | | | |
| 1 | Դիտահորի սալերի ապատեղակայում, տեղակայում<br>Демонтаж, монтаж плит колодцев | հատ<br>шт | 42 | 3.03 | 127.13 | |
| 2 | Դիտահորերի միաձույլ բետոնե պատերի իրականացում B20 բարձրացում/ Наращивание стен колодцев B20 | մ3<br>м3 | 5.04 | 67.75 | 341.44 | |
| | 3. Ընդամենը/հազ. դրամ/<br>3.Итого /тыс. драм/ | | | | 468.57 | 0.069 |
| | Ընդամենը Ս. Բաղդասարյան փողոց /Ս. Բաղդասարյան փ. Ա. Հարությունյան փ. Խաչմերուկից Վնասվածքաբանական / ՊԿ0+00-ՊԿ14+66/Улица С. Багдасарян / от перекрестка улиц С. Багдасарян - А. Арутюняа до Научного Центра Травмоталогии и Ортопедии/ПК0+00-ПК14+66/ | | | | 106223.79 | 15.659 |
| 10 | Գյուրջան փողոցից մինչև 8-րդ փողոց ՊԿ0+00 -:- ՊԿ6+00 | | | | | |
| I | Քանդման աշխատանքներ<br>Разборочные работы | | | | | |
| 1 | Գոյություն ունեցող ճանապարհային ծածկի ֆրեզում հմիջ=5սմ և հանձնում սեփականատիրոջը /Фрезерование существующего дорожного покрытия hср=5см , возврат собственику | մ2<br>м2 | 4880 | 0.71 | 3483.40 | |
| | 1. Ընդամենը/հազ. դրամ/<br>1.Итого /тыс. драм/ | | | | 3483.40 | 0.513 |
| II | Ծածկի կոնստրուկցիան<br>Конструкция покрытии | | | | | |
| 1 | Փոսային նորոգում h=3-:5սմ<br>Ямочный ремонт h=3-:5см | մ2<br>м2 | 146.4 | 4.84 | 709.24 | |
| 2 | Շին աղբի բարձում, տեղափոխում լցակույտ 13.0կմ<br>Погрузка строительного мусора, перевозка в отвал 13 км | տոն<br>тон | 12.9 | 1.41 | 18.22 | |
| 3 | Հարթեցնող շերտ մանրահատիկ ա/բետոնով հմիջ=3սմ<br>Выравнивающий слой мелк. а/бетоном hср.=3 см | տոն<br>тон | 68.808 | 43.00 | 2959.04 | |
| 4 | Մակերևույթային մշակում բիտումով 0,6լ/մ2<br>обработка поверхности битумом 0.6л/1м2 | մ2<br>м2 | 4880 | 0.17 | 840.21 | |
| 5 | Ա/բ ծածկի իրականացում մանրահատիկ ա/բետոնից h=5սմ/Устройство мелкозернистого а/бетонного покрытия h=5см | մ2<br>м2 | 4880 | 5.12 | 24997.68 | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 2. Ընդամենը/հազ. դրամ/<br>2.Итого /тыс. драм/ | | | | 29524.39 | 4.352 |
| III | Դիտահորեր<br>Колодцы | | | | | |
| 1 | Դիտահորի սալերի ապատեղակայում, տեղակայում<br>Демонтаж, монтаж плит колодцев | հատ<br>шт | 4 | 3.12 | 12.46 | |
| 2 | Դիտահորերի միաձույլ բետոնե պատերի իրականացում B20 բարձրացում/ Наращивание стен колодцев B20 | մ3<br>м3 | 0.48 | 68.17 | 32.72 | |
| | 3. Ընդամենը/հազ. դրամ/<br>3.Итого /тыс. драм/ | | | | 45.18 | 0.007 |
| | Ընդհանուրը Գյուրջյան փողոցից մինչև 8-րդ փողոց ՊԿ0+00 -:- ՊԿ6+00/հազ.դրամ/<br>Всего от улицы Гурджана до 8-й улицы ПК0+00 -:-ПК6+00/тыс.драм/ | | | | 33052.98 | 4.872 |
| | Ընդհանուրը առանց ԱԱՀ/հազ.դրամ/<br>Всего без НДС/тыс. драм/ | | | | 678369.90 | 100.00 |
| | ԱԱՀ 20%/հազ.դրամ/<br>НДС 20%/тыс. драм/ | | | | 135673.98 | |
| | Ընդհանուրը ԱԱՀ-ով/հազ.դրամ/<br>Всего с НДС/тыс. драм/ | | | | 814043.88 | |

## ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| | |
|---|---|
| Կանխավճարի պայման | Չի պահանջվում |
| Մասնակցին ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության տրամադրման ժամկետ | 15 աշխատանքային օրվա ընթացքում |
| Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ ծավալաթերթին համապատասխան: | |
| *Մասնակիցը պետք է ունենա շինարարության իրականացման գործունեության լիցենզիա՝ ըստ քաղաքաշինության հետևյալ ոլորտների՝<br>1) տրանսպորտային<br>Շինարարության իրականացման գործունեության լիցենզավորման հարաբերությունները կանոնակարգվում են «Լիցենզավորման մասին», «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, սույն կարգով և այլ իրավական ակտերով: | |
| Շինարարների համազգեստի վրա՝ շինարարություն իրականացնող կազմակերպության տարբերանշանի առկայություն | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
ՀՎՀՀ 02593108

Վ.Պապիկյան ______________
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
«Ա.Ա.Բ. ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ
ք. Երևան, Գևորգ Վարդանյան 1Ա
Արդշինբանկ ՓԲԸ
Հ/Հ 2470100091880010
ՀՎՀՀ 00250339

Ա.Բաղդալյան ______________
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 2
«21» «05» 2024 թ. կնքված
ԵՔ-ԲՄԱՇՁԲ-24/39 ծածկագրով պայմանագրի

**ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ**

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՆՈՐ ՆՈՐՔ ԵՎ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՄԻՋԻՆ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը** | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | Երևան քաղաքի Նոր Նորք և Նորք-Մարաշ վարչական շրջանների փողոցների միջին նորոգման աշխատանքներ | Պայմանագրով նախատեսված շինարարական աշխատանքները սկսվում են՝ տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պայմանագիրը (ֆինանսական միջոցների տրամադրման համաձայնագրերը) ուժի մեջ մտնելու օրվանից | 200-րդ օրացուցային օրը ներառյալ |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
ՀՎՀՀ 02593108

Վ.Պապիկյան ________________
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
«Ա.Ա.Բ. ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ
ք. Երևան, Գևորգ Վարդանյան 1Ա
Արդշինբանկ ՓԲԸ
Հ/Հ 2470100091880010
ՀՎՀՀ 00250339

Ա.Բադալյան ________________
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 3
«21» «05» 2024 թ. կնքված
ԵՔ-ԲՄԱՇՁԲ-24/39 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| աշխատանքների | | | | | | | | | | | | | | ՀՀ դրամ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հ/Հ | Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Դիմացվճարումներընախատեսվում է իրականացնել 2024թ-ին՝ ըստամիսների, այդթվում** | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45231188/504 | Երևան քաղաքի Նոր Նորք և Նորք-Մարաշ վարչական շրջանների փողոցների միջին նորոգման աշխատանքներ | 0% | 0% | 0% | 0% | 0% | 0% | 0% | 0% | 0% | 0% | 0% | 0% | 0% |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
ՀՎՀՀ 02593108

Վ.Պապիկյան ________________
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
«Ա.Ա.Բ. ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ
ք. Երևան, Գևորգ Վարդանյան 1Ա
Արդշինբանկ ՓԲԸ
Հ/Հ 2470100091880010
ՀՎՀՀ 00250339

Ա.Բադալյան ________________
(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված թիվ 4*
*«      » 20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ

______________________ -
______________________ -
գտնվելու վայրը __________ –
հհ ______________________ –
հվհհ ____________________ –

Պատվիրատու

______________________
______________________
գտնվելու վայրը __________
հհ______________________
հվհհ____________________

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«    » «        » 20   թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ ________

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «      »      20    թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| | Կատարված աշխատանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | ճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց
______________________
ստորագրություն
______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց
______________________
ստորագրություն
______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

*Հավելված 4.1*
*«      »          20  թ.  կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ____________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ___________-ի
Պատվիրատուի անունը                                                    Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20   թ. ______________________ -ին կնքված N ____________________
պայմանագրի կնքման ամսաթիվը                                              պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20  թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն
______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն
______________________
ստորագրություն

Հավելված 4.2
«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-24/39»* ծածկագրով
բաց մրցույթի հրավերի

# ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

**(որակավորման ապահովում)**

ք. Երևան

«17» 05 20 թ.**

**«Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ-ն**, ի դեմս Ընկերության տնօրեն Արմեն Բաղալյանի (նույնականացման քարտի համար՝ 014827570, տրված՝ 21.02.2023, 001-ի կողմից), որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

## 1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Երևանի քաղաքապետարանի* (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-24/39* ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակից, կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում, Ընկերությունը, Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ՝

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, եթե այն հանգեցնում է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծման, Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Պատվիրատուի կողմից կնքված պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

**3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝**

**«Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ**
ընկերության անվանումը

**Գևորգ Վարդանյան 1Ա, ք. Երևան, ՀՀ**
ընկերության հասցեն

**Արդշինբանկ ՓԲԸ**
ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

**2470100091880010**
ընկերության բանկային հաշվեհամարը

**00250339**
ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը

**Արմեն Բադալյան**
ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը

Կ.Տ
Օր/ամիս/տարի

1\.

# ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ*

2\. Թիվ

3\.

Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

4\. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն ( Ընկերություն՝ **«Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ**)

5\. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն ( բանկ)՝ **Արդշինբանկ ՓԲԸ**

6\. Վճարողի հաշվի համարը՝**2470100091880010**

7\. Վճարողի ՀՎՀՀ՝**00250339**

8\. Վճարողի ՀԾՀ՝

9\. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ **Երևանի քաղաքապետարան**

10\. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11\. Շահառուի ՀՎՀՀ՝ **02593108**

12\.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ **ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն**

13\.Շահառուի հաշվի համարը (հշ.N) **900015211429**

14\.Գումարը (թվերով և բառերով)՝ 244,213,164 (երկու հարյուր քառասունչորս միլիոն երկու հարյուր տասներեք հազար մեկ հարյուր վաթսունչորս)

15\. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16\.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ, AMD

17\.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(որակավորման ապահովման համար)*

18\. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝

19\. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>

20\. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

| | |
|---|---|
| 22.ա. Շահառուի ստորագրությունները<br><br>/___________________/<br><br>/___________________/<br><br>22.բ.<br><br>Կ.Տ. | 21.ա. Վճարողի ստորագրությունները՝<br><br>/___________________/<br><br>/___________________/<br><br>21.բ.<br><br>Կ.Տ. |
| 24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br><br>/___________________/<br>/ստորագրություն/<br><br>24.բ.<br><br>Կ.Տ.<br><br>24.գ "___" ___ 20___ թ. | 23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br><br>/___________________/<br>/ստորագրություն/<br><br>23.բ.<br><br>Կ.Տ.<br><br>23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ. |

Հավելված 5.1
«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-24/39»* ծածկագրով
բաց մրցույթի հրավերի

# ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի ապահովում)

ք. Երևան

«17» 05 20 թ.**

«Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Արմեն Բադալյանի (նույնականացման քարտի համար՝ 014827570, տրված՝ 21.02.2023, 001-ի կողմից), որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

## 1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Երևանի քաղաքապետարանի* (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-24/39* ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար: 1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

### 3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

**«Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ**
ընկերության անվանումը

**Գևորգ Վարդանյան 1Ա, ք. Երևան, ՀՀ**
ընկերության հասցեն

**Արդշինբանկ ՓԲԸ**
ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

**2470100091880010**
ընկերության բանկային հաշվեհամարը

**00250339**
ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը

**Արմեն Բադալյան**
ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը

Կ.Տ
Օր/ամիս/տարի

1.

**ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ***

2. Թիվ

3.

Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն՝ **«Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ**)

5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ **Արդշինբանկ ՓԲԸ**

6. Վճարողի հաշվի համարը՝ **2470100091880010**

7. Վճարողի ՀՎՀՀ՝ **00250339**

8. Վճարողի ՀԾՀ՝

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ **Երևանի քաղաքապետարան**

10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝ **02593108**

12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ **ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն**

13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) **900015211429**

14.Գումարը (թվերով և բառերով)՝ 81,404,388 (ութսունմեկ միլիոն չորս հարյուր չորս հազար երեք հարյուր ութսունութ)

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ, AMD

17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(պայմանագրի կատարման ապահովման համար)*

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝

19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

| | |
|---|---|
| 22.ա. Շահառուի ստորագրությունները<br><br>/________________/<br><br>/________________/<br><br>22.բ.<br><br>Կ.Տ. | 21.ա. Վճարողի ստորագրությունները՝<br><br>/________________/<br><br>/________________/<br><br>21.բ.<br><br>Կ.Տ. |
| 24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br><br>/________________/<br>/ստորագրություն/<br><br>24.բ.<br>Կ.Տ.<br><br>24.գ "___" ___ 20___ թ. | 23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br><br>/________________/<br>/ստորագրություն/<br><br>23.բ.<br>Կ.Տ.<br><br>23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ. |